

ՊՐԻՆՏԻՆԻՆԻՆԻ

Պուշկարինոյ	հաւար
Տարեկան	12 ծր
Վեցամսեայ	6 »
Արտասահմանի	
հաւար տարեկան	15 »
Վեցամսեայ	8 »

Աւերիկայի	հաւար
Տարեկան	3 շր.
Վեցամսեայ	1.50 »

Երանուցեան տղր առաջին երեսին հաւար 40 ս. իսկ վերջին երեսին հաւար 20 սանթրիմ է. երեքին աւելի ակազաւենեալ հաւար 20 Օ/Յ զեղջ կըլլայ:

Վառճաշի հաւար մ. ուր 10 սանթրիմ

ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՂՄՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐ ՏՐԱՆՍԻՒՆ ԶՈՐԵՔԵԱԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ

Նախկին Լե Գրում Գրիկի
Խմբագրութեան հասցիին

Редакция на вѣстникъ
„Шаржумъ“
Варна

Redaction du journal
„Charjoum“
Varna (Bulgarie)

Արտասահմանի հաւար
մեկի (20 ՍԱՆԹՐԻՄ)
Պուշկարինոյ հաւար
մեկի (15 ՍԱՆԹՐԻՄ)

Գրութիւնք եւ չեւ տրուի

ՇԱՐՋՈՒՄԻ ԲԱՏԱՆԱԳՐԻ ԳՐՈՒՄԻՆ ԲԱՏԱՆԱԳՐԻՆ ԳԵՏԻ ԵՒ ԿԱՆԿԱՎՈՒՄ

ՍԵՆՔ ԵՒ ՍԵՐ ՍՕՑԻԱԼԻՍՏՆԵՐԸ

Սոցիալիզմի վարդապետութիւնը գոնէ մասամբ գործնականի վերածելու համար ունի ժողովրդի մէջ, անհրաժեշտ է խոշոր ինդուստրիա, խոշոր կապիտալներ, մեծաքանակ բանուոր, սեփականութիւնից զուրկ պլուրտարիատ և որոշ մասուր կարգացում: Այդ պայմանները ծածկահայաստանում գոյութիւն չունեն, իսկ Լոկասում միայն նշաններ կան:

Կապիտալը չէ որ քամում է տաճկահայի արիւնը: Ծածկահայ ժողովրդի առաջին թշնամիները կապիտալիստները չեն, այլ վայրենի թէթիմը և վայրենի ցեղերը, որոնք ամեն օր և ամեն ժամ հայի կեանքն են խլում: Եւ մենք պարտաւոր ենք կռուել այդ թէթիմի և վայրենի ցեղերի դէմ: Մեր ժողովրդի գոյութեան սպառնում են սրով, հրացանով, թալանով և հրդեհով. և մենք պարտաւոր ենք այդ միջոցներով դիմադրել, որովհետեւ կարլ Մարքսի և Էնգելսի քարոզները այդ պարագայում նոյնքան անզոր ու անպէտք են, որչափ քրիստոսի աւետարանը:

Մեր սոցիալիստները գիտեն որ ժողովրդների կեանքի բարելավումը սեղի է ունենում աստիճանաբար, քայլ առ քայլ: Բայց մոռանում են որ աստիճանական բարելավումը կատարվում է կանոնաւոր կերպով միայն այն պարագային, երբ ժողովուրդների կեանքի ամեն մի շրջանը ստեղծվում է կանոնաւոր կերպով և վերջանում առանց ոտախնայների, առանց խոշոր պատահարների: Խոշոր կատաստրոֆների միջոցին ժողովուրդները կամ բոլորովին ջնջվում են, կամ մի սոժամանակ կանգ են առնում առաջադիմելուց: մինչև որ ինքզինքներն չտկեն, կամ թէ յետ են գառնում: Մենք հայերս «ինքզինքն» չտկելու պիտէ:

տուժ ենք գտնվում: Բայց մեզ ոչ միայն թող չեն տալիս որ շտկվենք, այլ ձգտում են բոլորովին ջնջել: Մեզ ցամաք հաց ուտելու, շնչելու և աճելու իրաւունքից են զրկում, սուր, կախալան գլխներս բռնած և մենք պարտաւոր ենք այդ տարրական իրաւունքները պահպանելու համար միայն և միայն սուր, եւթալան և կրակ գործածել, այսինքն նոյն գործիքները, ինչ որ թշնամին է գործածում: այս պարագայում հեռանելով ճիշդ Գար. վինի վարդապետութեան, ցեղային գոյութեան պահպանումի մասին:

Եւրոպացի բանուոր դասակարգը կազմակերպվելով կռու է մրցում կապիտալիզմի դէմ ոչ թէ շնչելու, ուտելու, աճելու իրաւունքները վերստանալու, այլ իր նոր պահանջներին բաւարարութիւնը տալու համար: Եւրոպացի բանուորը այսօր չի բաւականում միայն շնչելով, ուտելով և աճելով, այլ նա ուղտ է և կոմֆորտ ունենալ, վայելել այն բոլոր բարիքները ինչ որ վայելում է կապիտալիստը: Չը նայելով այդ դժգոհութեան եւրոպացի բանուորը այսօր համեմատաբար իր և քաղաքակրթված մարդ աւելի լաւ է ապրում քան էր վրումցի փոքրիկ կապիտալիստը: Եւրոպացի բանուորն էլ որոշ քամանակում նոյն ձեւով, նոյն զէնքերով կռիւ է մղել նախ և առաջ շնչելու, ուտելու և աճելու իրաւունքները պահպանելու համար, եւ այսօր մեր «քաղաքի» սոցիալիստները հային ծաղրում, լքում են, երբ նա զէնք է ուղտ իր շնչելու, աճելու և ուտելու իրաւունքը միայն զամ ընդ միշտ ձեռք բերելու համար:

Այս երեւոյթը պարզօրէն որոշում է թէ մեր սոցիալիստները անձամբ են հայկական կեանքին, շեն ըմբռնում մեր կեանքի պատմական մոմէնտը, ազնութիւնը չունենալով խոստովանել և իրենց քաղաքացիական սնանկութիւնը թագնվելով զանա-

զան ցիտաւորների ապ, որ արտագրում են եւրոպական այս ինչ կամ այն ինչ հեղինակաւոր ընկերաբանների բրոշյուրներից ու գրքերից: Սա մի գիտակցաբար կամ անգիտակցաբար գործվող շարժումն է թիւն է բացարձակապէս, որով մեր անպատրաստ երիտասարդութեան աչքին թող են փչում:

Եւրոպացի կերպ էլ անկարող էր լինել, որովհետեւ մեր սոցիալիստների մեծամասնութիւնը կամ իր մանուկ հասակից կտրված է եղել հայ կեանքից, կամ թէ երկար տարիներ սպրեւով օտար ցեղերի մէջ ու ծանօթանալով նրանց կեանքի ու պահանջների հետ, այն էլ մեծ մասամբ գրքերով, այսօր ենթարկվելով ընդհանուր հոսանքին, գոնէ իբրև հայ սոցիալիստ, ուղտ է երևան զալ և իբրև մի ֆակտոր ներկայանալ մեր կեանքում:

Իզուր ջանք և իզուր ճիգ մերքան էլ որ հայ սոցիալիստները ապրում: րով հրապարակ դան, որքան էլ որ մեր կեանքի անյարմար ֆըրաչներ, այն էլ բերան արած, բայց ոչ մարսած, ֆրաչներ ու տէրմիներ մէջ տեղ նեւան, շեն կարող ֆակտոր դառնալ, որովհետեւ մեր կեանքի ամենամեծ ֆակտորը այսօր այն ապրել է որը զէնք է գործածում և կարողանում է այդ զէնքի գործածելու գործը կանոնաւոր ու նպատակայարմար կերպով վարել ու շեղվարել: Ինչպէս վերը ասացինք մեզ այսօր առայժմ պէտք է ազատօրէն շնչելու, աճելու և ուտելու իրաւունքը վերստանալ, և այդ միայն զէնքով կարող ենք ձեռք բերել: Հայի ներկան զէնքը լաւ գործածող տարրին է պատկանում, ապագայում թերեւս սոցիալիստները գեր խաղան. բայց ոչ մեր ներկայ սոցիալիստները այլ հայ կեանքի արտագրած սոցիալիստները:

Միւս անգամ մենք կապուցուցենք որ իրապէս մեր սոցիա-

լիստ կոչվածները հայութեան հետ կապ չունեն և չէին ալ կարող ունենալ:

ՎՊԳՊ

ՉՅՐԸ—ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ

Վերնագրէն պէտք չէ հետեւցնել խոր ուսումնասիրութիւն մը, որ կը խոստովանիմ կարողութենէս վեր է: Իսկապէս այսօրինակ հարցերու լուսաբանութիւնը կարող գրիչներու կը պատկանի, որոնք քիչ շատ ուսումնասիրած ըլլան մեր ներկայ երիտասարդութեան ալ անկարելու մասը զբաղեցնող խնդիրները:

Սոսնց ուն է ուսումնասիրութեան ալ կանաքը ինքնին կը ներկայանայ իբրև զպրոց: Դիտողին համար ան ունի շատ մը կենդանի դասեր, որոցմէ ազատ է օգտուիլ ամեն ոք, որքան որ կուզէ եւ որքան որ կըրնայ:

Եւրոպայի հասարակական կեանքը յեղաշրջող հոգեւորային զարգացում է սոցիալիզմը, որովհետեւ իր սկզբունքներով ամենէն շատ կը համապատասխանէ ամբողջի պէտքերուն: Գերմանիան իր ծոցին մէջ կը սընուցանէ 3 միլիոնէ աւելի ընկերավարականներ: Պատկանելի թիւ մը, այնպէս չէ: Այս ահագին ուժը կազմուած է բանուորներէ, արհեստաւորներէ մեծաւ մասամբ, Համեստ կրթութիւն մը կը պար աճէն քաղաքացիի ձրիարար կընծայուի: Կը նպաստէ բանուորին մաւտորական բարձրացման եւ հետեւաբար զերի գիտակցութեան: Այս պատճառաւ իսկ անոր կենցաղը եւրոպական ուրիշ երկիրներու բանուորներու կեանքին համեմատաբար աւելի լաւ է: Հոս տեղն է նկատել եւ շեշտել որ սկեանքի եւ ինչքի ապահովութիւնը գերման բանուորներին համար բարօրութեան պայման չի այլեւս: Ան ալ կը զուհէ իր կեանքը, բայց տարբեր եղանակով քան Հայաստանի հայը, որ որ ամէն ժամ ու վայրկեան անխուսափելի մահուան ահ ու սարսափով կապրի:

Գերման պրօլետարիատն կը պայքարէ կապիտալիզմը եւ ընկալցիան, իսկ հայր սախուած է ցեղային կրօնի մղել բռնութեան դէմ: Կը տեսնենք թէ տարբեր են թշնամիները, ուրեմն եւ տարբեր կուլի եղանակը: Նպատակը միեւնոյնն է ամէնքն ալ կուզեն իրենց կեանքը բարելաւել: Հայը ցեղային կուլի կը մղէ, ոչ

Թէ անոր համար որ ան նացիօնա-
լիզմի «թոյնով» լեցուած ըլլար—
գոնէ գաղտնաբերական շրջանակները
զուրկ են անկէ եւ թէ որ այսպէս
ալ ըլլար՝ յանցանք չէ, երբ նկատի
ունենանք պատմական հանգամանք-
ները—այլ որովհետեւ կեանքի ներ-
կայ, անհրաժեշտ պահանջը ատ է,
Հայն ալ կուզէ ապրիլ եւ իբրեւ ար-
գելը յարգաւարի կեանքի մը. իր-
րեւ գիշատիչ, կեղեքիչ, թորքը կը
գտնէ իր առջեւ: Հայաստանի հա-
յուն վիճակին գիտակից ամենամո-
լեռանդ ընկերակարականներն իսկ
նոյնքան բազմաթիւ ոգի կը հան-
դուրեմն: Բռնութեան տակ հեծող
ժողովուրդը շարժողը այդ ոգին եղած
է:

Ներկայ Գերմանիան իր միլիտար-
ւոր ընկերակարականներով պատմա-
կան ճիշդ միեւնոյն մոմէնթին մէջ
գտնուած է ասկէ մտ հարիւր տարի
տառջ, ուր կը գտնուինք հայերս
ներկայիս մէջ:

Հայերէն չկրնար պահանջուիլ որ
մի քանի տարւայ մէջ պատմական
այն շրջանէն անցնին որուն համար
եւրոպական ազգեր, ասիլի նպաս-
տաւորուած պայմաններով ամբողջ
զար մը պէտք ունեցած են:

Թանօթ է որ շատ անելի վտեմ գա-
ղափարներ յեղափոխական զինուոր-
ներու գանկը կարեկոծեն եւ շատեր
արեան առջեւ նողկանք զգալով
հանգերձ զիմեցին յեղափոխութեան
անողորմ, բայց անխուսափելի ուղի-
ին:

Կըսուի թէ հայ ընկերակարականին
համար հաւասար սիրելի է հայը,
թուրքը, գնչուն, հրէան եւնո ծաշա-
կի եւ զգացումի ակներեւ բացակա-
յութիւնը չէ որ հոս երեւան կուգայ,
այլեւ նեղսիրտ ու սահմանա-
փակ արամադրութիւն մը, զոր փայ-
լուն զէմքեր թուրքակի պէս իրարու
ետեւէ շարող պարոնի մը չը
պիտի վստահէի: Ամէն խորհող հայ
չատեր թուրքը իբրեւ մարդ, այլ ա-
նոնց մարմնացած անանային ու ար-
մարդի յատկութիւնները: Երկրորդ՝
այսօր ամբողջ Տաճկահայաստանի
ժողովուրդը անկարեւոր բացառու-
թեամբ արդէն տեսակ մը պրօլետար-
իատ է:

Երբ ճնշուած բանուրի մը կը կա-
րեկցինք, կը ջանանք զայն փրկել
որքան անելի եւս ճնշուած ամ-
բողջութեան մը:

Իբրեւ հայ, իբրեւ մարդ, իբրեւ
ընկերակարական սրտի տէր մէկը չը
կրնար հանդիսատես ըլլալ ժողովուր-
դի մը մարտիրոսացման, ընկերակա-
րականութեան ուժը առժամայէս
հոս չհասնիր: Անոր առջեւ առնե-
լու համար անելի արժանապատիւ մի-
ջոցներ պէտք են, որոնք համապա-
տասխանեն ժամանակի ու պէտքի
ուղղակի պահանջներուն:

Միանգամայն ապահով կեանքի
պայմանները ձեռք ձգելէ վերջ, շու-
տով ինտուսթրիան ոտք կը կոխէ
Հայաստանի կոյս հողին վրայ: Գա-
ղափարական տնտեսական այս յեղաշր-
ջումով պիտի հասունանայ եւ զար-
գանայ ընկերակարայան գաղափարը
եւ ստեղծէ զայն ներկայացնող ուժը:

Ազգերու լուծում, ապագայ տէ-
րութիւն, այս օրինակ թէօրիանե-
րու եւ ութօրիաներու իրականա-
ցումը դարբերու ընթացքին մէջ գիտ
չէ կարելի երեւակայել:

Ո՞վ պիտէ յաջորդ դարերը ինչ կը
բերեն իրենց հետ. գուցէ յղանան
գաղափարներ, որոնց առջեւ այս-

օրուայ շատ փառաբանուած սօցիա-
լիզմը նսեմանայ:

Եւս ընկերակարական մը
Մայնց. Հոնոնսի վրայ

ՆՈՐ ՉԱՐԻՔ ՄԵՆ ԱՆ
ԹՈՒՐՔԻՆՆԵՐ ՀԱՅԵՐԱՌԻՍ ԳԼԽՈՒՆ

Օր կանցնի՝ որ Համիա-աղան
նոր պատուհաս չի հապցնէ խեղճ
ժողովրդին պիտուն:

Օր նոր, ժողովուրդը կեղծ քե-
լու միջոցները նոր:

Ամէն անգամ որ Սուլթանին
խաղնէն ոմկները ճիրիթ կը խա-
ղան, Համիդին եւ անոր չիք-
պաշտօնեաներուն շորնայիք ու-
ղեղները գիտեն ստեղծել նոր
նոր միջոցներ...:

Խեղճ ժողովուրդը թող ոչ ըլ-
լայ, կ'իման կովը ան է: Բայց օր
մը օրանց հարցուցած փնտռած
ունի՞ արդեօք կարմիր-գաղանը
թէ՞ ուրկէ՞ պիտի ապ դրամը
ժողովուրդը, երբ Թուրքիան
միջոցներ չի հայթայթեր գոնէ
ցամաք հաց մը տալու իր մէջը
պանդուներուն մեծ մասին:

Ի՞՞վ է ասոնք հարցնողը, ո՞վ է
փնտռողը, ո՞րքէնի վերմէջ օ-
լիւզու, եր թօփուզու, վէրիւր
տօգսան տօգուզու՞ կըսէ թուր-
քերուն առածը...:

Եւ Համիդի կառավարութեան
օրէնքները արդէն, այսօրուան
օրս թէ՞ իր եւ թէ իր պաշտօն-
եաներուն աչքին դասակարգ չափ
ալ արժէք չունին եւ իրաւունք,
խիղճ, արգարութիւն Թուրքիա
ըսուած տեղը գոյութիւն չունին,
ուր առակներով կը վարեն ամէն
բան:

Աս անգամ ալ ժողովուրդը կճ
պելու կողոպտելու նոր օրէնք մը
հաներ են (անձնական տուրք) ա-
նունին տակ, որուն կուննազը-
րութիւնը հրատարակած են Պօլ-
սոյ թերթերը, եւ զոր նախարա-
րական խորհուրդը որոշած ու
վեհափառն! ալ իրաւ էով մը վա-
ւերացուցած է:

Իսնխաւ ըսենք որ ատ օրէնքը
թէ եւ Թուրքիոյ մէջ ի ամէն ազ-
գերուն համար է, բայց զայն պիտի
տուժեն միայն ու միայն հայերը
եւ հաւանականաբար անոնց հա-
մար միջնակ գործադրելի ալ ըլ-
լալ:

Ահա ատ չիք կանոնադրին զի-
խաւոր արամադրութիւնները մօ-
տաւորապէս...:

Թուրքիոյ մէջ գտնուող բոլոր
այրերը, որոնք 18 տարին լրա-
ցուցած են եւ քէօր թօփալ չեն,
պիտի վճարեն դանձնական
տուրք մը:

Ատ տուրքին գումարը տարե-
կան 5 զրուչէն մինչեւ 1000 զրուչ
կայ:

Հարուստներուն վճարելիքը
ձգենք, եւ էսնաֆինն ու զիւզա-

ցիինը աչքի առջեւ ունենանք:
Աս մասին հետեւեալ կէտը կայ
կանոնադրին մէջ.—

«Իրեղեւուն ժողովուրդները ա-
ռաջին կարգին մէջ պիտի մտ-
ցուին (այսինքն 5 զրուչ պիտի
տան մարդ զլուխ), իսկ քաղաք
ներու եւ գիւղաքաղաքներու ժո-
ղովուրդները՝ իրենց երկու օր,
ուան շահնուրուն եւ ամաթոչակ
ունեցողներն ալ իրենց ամաթոթո-
չակին երկու օրուան գումարին
համեմատութեամբը վերագրեալ
կարգերէն մէկը պիտի մացուին
(այսինքն երկու օրուան շահի
գումարը ինչ որ ըլլայ), այնքան
գրամ պիտի տայ գրեթէ, 10,
20 հալլին»:

Աս վերը յիշուած կարգերը,
այսինքն տուրքին ո՞րքան ըլլա-
լու պիտի որոշեն դանձնաժողով-
ները՞ և առ գործողութիւնը
պիտի սկի յառաջիկայ նոյնմ-
բեր 15 էն եւ մինչեւ յունուար 15
պիտի լրանայ:

Խեղճ հայերը ալ գործ ունին,
ձեռք փետը անպակաս է նորէն:
Անասկան ունեցողներուն տուրքը
որոշել մասամբ մը զիւրին է,
իսկ առեւտրով պարապողները
ինչեւ պիտի քաշեն, Յանձնա-
ժողովին քէյֆը ինչ ուղէ, օրա-
կան շահը այնքան պիտի որոշէ,
որպէսզի անոր կրկնը լեցուն
տուրք առնէ: Եւ տղայութիւն է
տարակուսիլը որ հայերուն տու-
րքը թուրքերունին կրկնը պիտի
չըլլայ... և ինչու՞ չի յիշենք
որ, թէ՞ զիւղացի եւ թէ՞ քաղա-
քացի հայէն տարին քանի մը
անգամ պիտի գանձէ աս տուրքը
հասնող ստեղծական ոչ զրպաճօին
ուժովը...:

Չի մոռնանք նաև յիշել որ,
տուրքի քանս կուտեան մասին
եթէ մինչև 10 օր զիւտողու-
թիւն ընէ մէկը, նկատի ուրիտի
առնուի ե քիշնայ քանակութիւ-
նը: Աս կանոնն ալ թուրքերուն
համար գործածելի է անսարա-
կոյս... «Եւնձնական տուրքը
ամէն տարի մարտին պէտք է
ա՛նպատճառ վճարուի»:

Մինչև ան տուրքը չի վճարուի՞
«Թէչքէրէ և ուրիշ տեսակ կա-
ռավարական գործեր չի պիտի
կրնայ կարգադրել օ եւ մէկը»:
Եթէ մէկը մեռնի, և կամ յան-
կարձ մարմնոյն մէկ մասը վիսա-
ուելով անկարող ըլլայ աշխատե-
լու, ազերսագիր արուելուն պէս
տուրքը պիտի դադրի:

Աս ալ հայերուս համար վրաս
գրեցէք: Ետևեր տարիներէ իվեր
մեռած են և տուրքերը փառասո-
րապէս գանձուած են ձեծով ու
փեռով:

Խեղճ հայերս ոչ իտէլիէսի և
ոչ մլաքի տուրքերուն համար
այնքան խստութիւններու կը
հանդիպինք, աս ալ հալածուքի
նոր դուռ մը կը բանայ:

Թուրքիոյ բոլոր պաշտօնեանե-
րուն, ուտիկաններուն, խապրի-
մալներուն աչքը լոյս. նոր աս-
պարէ՞չ...:

Կերևայ թէ՞ գեռ քաշելիք ու-
նինք...:

Յիշիպէ

ԱՐՏԱՍՈՎՈՐ ՆՈՒՐՈՒՆՈՒԹԻՒՆ

Տաճիկները մեր բոլորիս ալ տես-
լի արարածներ դարձան՝ վերջերս
իրենց գործած վարագու թեանց և
հարստահարութեանց պատճառաւ:
Բայց զժրատարար դիտ կը գտնուին
մեր մէջ այնպիսիներ, որոնք սիրա-
լիր յարաբերութեանց մէջ են նոյն,
իսկ այն թուրք աններու հետ, ու-
րոնց թաթերէն մեր անտեղ եղբայր
արինն է որ կը կաթէ:

Այսպիսի տաճկամոլներէն մին է
պ. Մովսէս Մանուկեան. այս անձը
45 տարի առաջ բարեկամացած է Գե-
մախի թալարի փաշային հետ. փաշան
չուտով մուսցած է իր վաղեմի բարե-
կամը, մինչդեռ մեր պ. Մովսէսը
զայն չը մոռնալով հանդերձ, իբր
բարեկամական նուէր մը, արձաթէ
տուրք մը շինել տարով 84 Քր. ի փա-
շային պիտի լիզէ:

Այդ սովորութիւնը մեր Գեմախ-
ցիներուս մէջ ընդհանրացած էր,
այնպէս որ եթէ մէկը երկիր երթար,
հարկ էր որ 3-4 Քր. շաքար եւ սուրճ
տանէր փաշային իբր նուէր. եւ
այդ նուէրն ալ կըլլար ոչ թէ անկեղծ
բարեկամութիւն մը արտայայտելու,
ալ մասամբ մը փաշային յթաթու-
թիւնը հրաւիրելու համար. բայց
հիմայ այդ սովորութիւնները վերց-
ուեցան, որովհետեւ մենք համոզուե-
ցանք թէ այդ փաշան հակասակ մեր
բարեկամական բոլոր ցոյցերուն,
միշտ նպասակ ունեցած է պաղտի
թակարարներով բոլոր Գեմախի հա-
րուստ գիւղացիները տապալել:

Պ. Մովսէս. դուք ալ մեր երկրի
զաւակն ըլլալով՝ հարկաւ հետաքրք-
րուած էք հոն տիրող կացութիւն-
ներուն. անչուս պիտի գիտնաք թէ
այդ փաշան ի՞նչպիսի անողորմ կեր-
պով սպաննել տուաւ 2 երիտասարդ-
ներ, երբ վերջիններ կը բողբէին
իր եղբոր ըրած գազանութեան վրայ:
Օրինակներ շատ կան, որոնք եթէ
մի առ մի թուէք պիտի տեսնէք թէ
ձեր բարեկամ փաշան որ աստիճանի
գագան մարդ մըն է, Արդէն մինչև
այսօր մեր հայրենակիցներու տը-
տունը այդ պիտի համար. դուք ալ
լսած էք. բայց երեւի բարեկամու-
թիւնիդ այն աստիճանի խորաւոր-
մատ է որ, փոխանակ զգուանք զգա-
լու այդ մարդու հանդէպ, տուրք մը
պատրաստեցիք, նկատի չառնելով
թէ որքան ստորնացաք. արդեօք
ինչ պիտի ըսեն մեր եղբայրներու
գերեզմանները, ոյոնք թալարի փա-
շան է փորած. միթէ անէք չ՞պիտի
աղաղակեն, եւ աւալ որ փոխանակ
ձեր անկեղծ եղբոր զրկելու 84 Քր-
րանքը, անոր մատաղ կեանքը ի՞նչ
լող վատ մը կը քաշուրէք:

Իսկականն է ալ, Պ. Մովսէս, անց-
եալի տիրուր դէպքերը մոռնալու չէ,
եթէ Գեմախցիներս մինչև այսօր
կատարեալ սարակա սարկեցանք, եթէ
չըմբոստացանք մեր պատիւի քա-
ղայման զէմ. գոնէ հիմայ, մեր վի-

ճակի ծանրութիւնը գիտակցօրէն ըմբռնենք, իմի հաւաքուելով լրջօրէն խորհրդակցինք :

Բոլոր Գեմախցիներս բուն կերպով բողոքելով ձեր ստոր վարմունքին դէմ, կը պահանջենք որ տուփը չի զրկէք այդ վատին . եւ երկրորդ ձեր աւելի զբաւը յեղափոխութեան տաք, որովհետեւ ան ազէկ ըմբռնած է թշնամի վարձատրութիւնը . վերջին անգամ ըլլալով կը կրկնենք թէ, եթէ մեր հաւաքական ձայնը անխելի մնայ եւ տուփը իր տեղը հասնի, այն ժամանակ մենք ալ իրաւունք ունինք ձեր ճակարհ զարնել ձեզ վայել ածականը :

Քեւսիսիսի սպազին մը

Սօֆիս

ԹՂԹԱՅՈՒԹԻՒՆ

Սալմաստ 28 Յուլիս

Սալմաստի ներկայ աննահրատապ խնդիրներէն մէկը—Սալմաստ—Ուրմիոյ փոխանորդի խնդիրն է . ժողովուրդը յազուաէտ է սովհետեւ գտնուում է մի անասելի կրիտիկական վիճակում . կառավարութեան ստիպումով թեմակալ Առաջնորդը նրան յետ է կանչում (փոխանորդ Հ. Ըսնակին) և հետագայում էջմիածին ուղարկելու համար :

Այդ բանը մեծ ու անպատմելի ցաւ է պատճառում անգացիներին, որովհետեւ Հ. Ըննակը նրանց ամէնաճերմ պաշտպանն էր դատաւորի (Սարգիսարաստ) կեղեքումներէ դէմ . չորս ամսից աւելի է որ Սարգիսարաստի դուռը փակուել է հայերի առաջ . այդքան ժամանակամիջոցում նա առնուազն 3000 թուման տուգանք առած կը լինէր անշուշտ ժողովուրդից . այդ շատ լաւ է զգում ժողովուրդը, բայց որ խիստ հրամաններով հետադնում են իր սիրելի փոխանորդին . նա մտածում է ամէն կերպ պաշտպանել, պահել նրան իր տեղում, բայց աւաղ, այդ նրա ուժերից վեր է : Արեւմտ անպատճառ պէտք է հետադնալ Հ. Ըննակը . բայց թէ ինչու և նրա մեկնելուց յետոյ ինչ կը լինի, այդ է մտատանջում խեղճ ու անախտ ժողովուրդին : Թէ ինչու են հետադնում, այդ պարզ է ժողովուրդի համար . նա գիտէ որ փոխանորդի Սալմաստ ուղք գնելուց մի քանի օր անցած—չանցած Սարգիսարաստը—այդ արիւնքաբոյս և պատասող գազանը—թշնամացաւ նրա դէմ և սկսեց մեքենայութիւններ լարել, ինարկը ներ ստրքել . հետագիւր հետագիւր վերայ էր խփում թաւրիզ, թէհրան բոլոր կառավարչական կաշառուու պաշտօններին և հաւատացնում որ Ըննակ վ.ը «Աշախ» է, «Աշախ—բաշի» է, հոգեբարկան չէ, քաղաքական գործերի է խառնուում և այլն . այդ բոլորը գուցէ այնքան չազդէին պաշտօնեան իր վրայ, եթէ Սարգիսարաստը մի ուրիշ ստոր ու անելակայանի միջոցի ևս չլի մէր . այդ միջոցը հայերն էին . նա Հաֆիզիանցի երկու եղբոր՝ սարգիսարաստի համոզելով, հետագիւր է խփել տալիս ամբողջ Հաֆիզիանցի հասարակութեան կողմից, բողոքելով Ըննակ վ. ի դէմ, իբրև թէ նա ճշուում է հայերիս . այդ բանը շատ է բարկացնում թագաժառանգին, որը Սաղաբազմի միջոցաւ (արտաքին գործոց նախարար) կսթողի կոտից պահանջում է հետագնել Ըննակին Սալմաստից . վեհափառ կաթո-

ղիկոսը սկզբում քննութիւն է պահանջում, բայց յետոյ ստիպուած է լինում անպայման կերպով յետ կանչել . Ըննակ վ. ը պատրաստուում է գնալու : ժողովուրդը նախտեսում է իր ապագան և ծրագրում է թաւրիզ ու էջմիածին պատգամաւորներ ուղարկելու իր ցաւերի համար : Նա լաւ գիտէ, որ եթէ վաղը Ըննակ վ. ը ոտքը դուրս գրեց Սալմաստից, Սարգիսարաստը 3000 թումանը տոկոսով հանգեցրած զորս կը պոկի . նախօրոք այդ քանի սառն առնելու համար, ժողովուրդը լաւ ծրագիրներ է կազմում, եթէ իրականացնել կարողանայ : Մուրառանի վրայ էլ յանցանք է բարդում, որովհետեւ նա գոնէ ժողովուրդի միջոցաւ պիտի աշխատէր պաշտպան լինել փոխանորդին . նա այդ բանը չարեք, զրա համար էլ զժուար թէ մի ուրիշ վարդապետ յանձն առնի զայ այս տեղ . մտածելով որ անպաշտպան է նալու : Ամենայն դէպս անցեալն է անց, Մուրառանը գոնէ առժամանակեայ կերպով Ատրպատականի վարդապետներէն մէկին ուղարկէր Սալմաստ լաւ կը լինէր :

Ըննակ վ. ը գաւազնութեան և խարդաւանների գոճ գնաց, թէպէտեւ ուրիշ նկատելի պակասութիւններ, բայց և այնպէս հայ ժողովուրդի անձնուէր պաշտպան էր : Սալմաստը ժամանակաւորապէս միթաւում է փոխանորդներով, բայց զժողովուրդը շուտ էլ զրկուում է : Ո՞վ գիտէ էջմիածինը մէկ էլ երբ պիտի այս տեղ փոխանորդ ուղարկէ, իսկապէս շատ ցաւում ենք նրա մեկնելուց, բայց ճար չունենք . նա տուտու է ամբողջ ժողովուրդի սիրտն ու զգացումները իր հետ եթէ ժողովուրդը մի ելք չգտնէ իր ներկայ տարտամ կացութեանը, պիտի սուժէ աւելի ստրտափելի կերպով քան առաջ և պիտի զղջայ խոր կերպով :

Յուլիս—Սալմաստեցի

Ռուստուք 21 Օգոստոս 1903

Մեր նախորդ օգոստոս 5 թուակիր թղթակցութեան ճշգրտութիւններն թայ 544 համարին մէջ պատասխան մը տուած է անգուշաւ ազգ. վարժաւորանիւրու հողադարձութիւնը, որ այժմ առիթ կուտայ միգր վերադառնալ ազգ. վարժարաններու ներկայ աննախանձելի վիճակին, աւելի երկար կանգ առնելով այդ կենսական յարկերուն շտրվը դարձած երևոյթներուն վրայ :

Պարզ իրողութիւն մը որ բացարձակ կերպով հսկառակ և վնասակար էր մեր ազգային կրթական գործին, ներկայացուած նոյնքան մեկին լեզուով, այժմ զանազան խեղափոխումներով կը վարագուրուի հողադարձութեան կողմէն : Իսկ բացատրութիւն կամ ուէ հիմնական շարժառիթ չկայ ու չկայ, նախորդ թղթակցութեանը որ ըստպէս մատնանշած էինք Պ. Ապագանի և տիրացու վարժապետ Պ. Գալուստի կարողութիւնները և հարց էինք տուած թէ ո՞րն է աւելի ընդունակ և յարմարային մեր ազգ. վարժարաններուն : Այժմ պատ. հողադարձութիւնը առանց ատոնց ներկատի առնելու յաւակութեամբ կը պատասխանէ թէ ինք բացատրութիւն տալու անկարող է, թէ ժողովուրդը ինքն է փափաքած որ հողադարձութիւնը շարունակէ այս տարի

ևս իր փափուկ պաշտօնը, ուրեմն և անոր բոլոր անօրինութիւններուն միանգամ ընդմիշտ համաձայն պարտաւոր է անուշադիր թողուլ հողադարձութեան բոլոր շղթայի մէջ անյաւջող, օգտակար թէ վնասակար անօրինութիւնները . աւելով հողադարձութեան սանձարձակ իրաւունքանհատական քաւահոգեւորով իսկ կառավարել ազգ. կրթական հիմնարկութիւնները :

Այդպէս, այդ մտքով ու սգով է գրած իր «կարծեցեալ» պատասխանը պատ. հողադարձութիւնը, վերջացրելով տղայական արամարանութեամբ մը, զոր կարծ ու ամփոփ կարելի է հետեւեալ կերպով արտայայտել . մենք այնպէս ու այնչափ կրնանք ընել, մեր որոշումներուն մէջ մնալով անգրգոյսի . բայց և այնպէս շինք ուզեր որ քննադատուինք, փափաքող թող իրամէ մեր աթոռին, մենք պատրաստ ենք սեղի սալու :

Այդ պատասխանը ուրիշ բան չէ, եթէ ոչ փախուստի միջոց մեր գիտողութիւններուն : Կանխաւ վարժարանէն ուսուցիչ մը հրաժարեցնելու զազափարը թէ և յղացած, բայց որոշապէս չէ գործադրած հողադարձութիւնը : Պ. Ապագանին ինքն է որ հրաժարած է, որչափ անք գիտենք, իսկ այժմ հողադարձութիւնը իր բերնովը կուզայ հաստատուիլ ինքնը պարզօրէն այդ նպատակով է վարուած : Սակայն այժմ անհարկ մը նետեցէք ներկայ ուսուցչական խմբին վրայ, որ Պ. Գալուստի պէս ձեր թօքիկ մը «ընդհանուր հսկող» պաշտօնին արժանանալու պատրուատացաւ : Նկատելու ենք նախաձեռնութիւններով ներկայ ուսուցչական անգոյն խումբը և պատրաստուած նոր ծրագիրը իր հակամակաւորակեան բովանդակ պարզութեամբ, մենք բացայայտ կերպով կը յայտարարենք որ ամենախղճուկ արդիւնք—կամ աւելի ճիշտը—վնաս—պիտի սայ այս տարուան կրթական շրջանը : Չուտ վաճառականներէ բաղկացած մեր հողադարձութիւնը՝ զուտ ալ չուկայի, առարական հայաքթներով դատաւորութիւններով կը վերաբերուի զարգացման, կրթական գործին :

Տասերկու տարեկան սղոց դասարանը հայերէն, պուրկարերէն, Փրանսերէն, գերմաներէն և սոմարականութիւն—կը նշանակէ վարժարանը վերածել յաւուն ի յոյս արտադրող գործարանի մը : Մենք կը կրկնենք որ ուսուցչական խումբը շատ տկար և անյարմար է, նկատել տալով թէ հողադարձութեան օթոտին վրայ բազմեալ ամէնատարական Նպատակ կա՞ միտք չունինք . այլ պարտաւոր կը գտնուինք մեզի մասնաձեւ մեր նուիրական յարկերուն մէջ տեղի ունեցող անցուղարձակը :

Սուրեն

ՍՕՖԻԱՅԻ ՊԱՏԻՄԱՆՈՐԸ

Պուրկարիսյ գրեթէ բոլոր քաղաքները ընտրեցին իրենց հայ պատգամաւորները՝ սոսալնորդական յառաջիկայ ընտրութեան համար : Միայն Ծոււրու, Վառնան, Ֆիլիպէն և Սօֆիան է որ դեռ այդ գործը չկատարեցին : Համոզուած ենք թէ Ծոււրու, Ֆիլիպէն և Վառնան, ամէն պարագայի մէջ, պիտի ընտրեն պատգամաւորներ որոնք որոշապէս յայտնի ըլլան իրենց

հակառակութեամբը վահան վարդապետի ընտրութեան դէմ :

Փայով Սօֆիան, ան իբրև կեդրոնը պուրկարիսյ առաջնորդութեան, մասնաւոր կարեւորութիւն մը կը ստանայ պատգամաւորական տեսակէտով : Հարկ անհրաժեշտ է որ Սօֆիան պատգամաւորը ներկայացնէ պահանջուած յատկութիւնները եւ ըլլայ անձնաւորութիւն մը որ թէ իր մնալուն հանգամանքովը եւ թէ իր ազդեցութեամբ կարենայ ապագայ առաջնորդին մօտ վստահելի խորհրդատուի դեր կատարել, եւ ի հարկին տրամադիր ըլլայ իր ծառայութիւնները մատուցանել առաջնորդական աթոռին :

Այս տեսակէտով Սօֆիայի համար յարմարագոյն պատգամաւորը տօքթ. Սիմոն Քիւշիկեանն է, որ թէ իբրև պարտաճանաչ ազգային, թէ իբրև իբրև զարգացած աննատ եւ թէ մասնաւոր կառավարութեան մօտ իր դիրքովը ու վայելած համարումովը միակ անձը կերեալ այս տեսակ պայտօնի մը մը յարմար : Անշուշտ Սօֆիայի հայերը յրջօրէն պիտի ուզեն նկատողութեան առնել այս փափուկ պարագան եւ ըստ այնմ վարտիլ :

ՓՈՒՐԻ ԹՂԹԱՍԱՐ

Այսօր յուղարկուորութեան մը պատճառով երբ եկեղեցի գացինք տեսանք թէ յայտարարութիւն մը եւ ընտրողաց ցանկ մը կախուած է, որ բազում ընտրողաց անուններ կը պակսին, քանտիտա կը ներկայացուին Տիարք Գրիգոր Թամիրեանց, Թագաւոր Հոտիկեան եւ Տիգրան Սարգիսեան(°) :

Ընտրութիւնը այս կիթակի պիտի ըլլայ եղեր, երեսասարգներու խումբ մը ելաւ ժողովուրդեան մէջ պտտիլ, բողոքելու համար որ կարելի չէ որ այս կիրակի կատարուի, որովհետեւ շատեր անգեղութիւն չունին, պէտք է յետաձգուի որ լուրջ կերպով մտածեն թէ որո՞ւ տան քուէնին եւ անոնք որոց անունները չկան՝ ընտրողաց ցանկին մէջ արձանագրուին : Ֆիլիպէ 22 օգոստոս . Ֆիլիպցի

Տեար խմբագիր

Վարժուած լրագրոց

Ստորագրեալքս կուզամք խնդրել ձեզ որ բարեհաճէք ձեր չորեքշաբթի օրուան թուոյն մէջ հրատարակել սոյն երկտողս որ ուղեալ է անգուշա ընտրողական ժողովոյ նախագահ աէր Մորտիրոս քահանայ Մարտիրոսեանի :

Արժանապատիւ տէր նախագահ

Ս. Հայր

Ձեր շրջարեւակներն համեմատ երկու օրէ ի վեր թագ. Ռորհրդարան կերթանք ժամը հին մեր անունները արձանագրել տալու սակայն զարմանքով ետ կը դառնանք . որովհետեւ գուրը զոց կը գտնենք, մինչդեռ սոյն մեր յայտարարութեան պէտք էր որ մինչև ժամը հենց թագ. Ռորհրդարանը բաց լինէր Սա բացորոշապէս ցոյց կուտայ թէ թագ. Ռորհրդարանը ապուպրած է իր քարտուղարին որ ելես փախցնէ, որպէսզի ժողովուրդը զրկուի քուէարկելու իրաւունքէն :

Կը բողոքեմք այս զրկումին դէմ և այժմէն կը յայտարարեմք ձեզ թէ

յառաջիկայ կիրակէ օրուան ընտրութիւնը ապօրինի պիտի ճանչնանք :

Գ. Սարգիսեան Օ. Մկրտիչեան Վ. Ընթրիչեան Խաչիկ Գրիգորեան Ս. Չաւիչեան Ն. Մարտիրոսեան Սեփական Աղաւանկեան Անթրակի Աղաւ. Կարապետ Երեցեան Դեռ երեսունէ աւելի ստորագրութիւնք :

ՌՈՒՍԱՆՎՅԵՐՈՒ ԲՈՂՈՔԸ

Եւրոպական թէրթերը կը հազորդեն որ քանի մը տեղ Ռուսահայերը բացարձակ հակակառավարական ցոյցեր քեր են եկեղեցական կալուածներու գրաւման առթիւ :

Օրինակ, Աղէքսանդրապոլ քաղաքի մէջ մօտ հինգ հազար հայերի միասին հաւաքուելով ցոյց քեր են. իսկ Երևանի հայերէն մօտ երեք հազար հայեր եկեղեցիին բակը հաւաքուելով առաջնորդ Պարզեան արք. Եպիսկոպոսէն պահանջներ են որ իրենց հետ միանալով երթան Էջմիածին ու Կաթողիկոսէն պահանջեն որ կառավարութեան զրկած թուղթերը շտորագրէ :

Երեք հազար հոգի ոտքով ճամբայ ինկեր են դէպի Էջմիածին. մօտ 14 քիլօմէթրօ տարածութիւնը՝ առանց հանգստանալու և առանց բան մը ուտելու կտրեր անցեր են Վաղարշապատ Երևանէն քաղաքներ ինկեր են ատոնց ետէն, բայց ժողովուրդը ճամբան փոխելով հասեր է Վաղարշապատ. այնտեղ ոստիկաններ և տեղական զօրքերու վաշտը ժողովրդին դիմաւորելով ուզեր են արգելք հանդիսանալ. նոյն իսկ օդի մէջ զէնք պարպեն են, բայց ժողովուրդը կրկին մտիկ չէ քեր և ամէն արգելք յաղթելով անցեր է դէպի վանքը. Հոն բարձր հողեռարկանութիւնը լաւ ընդունելութիւն քեր է. Կաթողիկոսը յայտարարել է որ ինք չպիտի համաձայնի կալուածները կառավարութեան յանձնել և այդպիսով ցուցարարները խաղաղ են :

Տեսնենք ուս կառավարութիւն ինչ կերպով պիտի վարուի ցուցարարներուն հետ : Այդ մասին դեռ մանրամասն տեղեկութիւններ չկան :

Ինչպէս կերևի՝ այս անգամ Ռուսահայերը տրամադիր չեն առանց քիմադրութեան հրաժարել իրենց աւանդական և սրբազան իրաւունքներէն :

(*) Բողոքաբերներն ներքև յայտարարուած այս շեքսունէ աւելի ըստորագրութիւնները չեն գրուած :

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Էջմիածինէն տեղեկութիւն կը տրուի Պատրիարքարան թէ, առաջնորդները և վանահայրերը Ն. Ս. Օժութեան նախագահութեան տակ ժողով գումարելով, որոշած են վերջնականապէս մերժել Ռուսիոյ կողմէ ներկայացուած պաշտօնաթուղթը և այս մասին հարկ եղած դիմումը պիտի ընեն ուր որ անկ է :

Այս մասին հետեւեալ հեռագրերը եկած է որ նոյն որոշումը կը հաստատէ :

Բեգեթսպուրկ, օգոստոս 29
Լուսաւորչակոն Հայոց Էջմիածին եկեղեցական ժողովը բացառապէս գումարուելով, որոշեց վերջնականօրէն թէ, ո՛չ ինք, ո՛չ նոյն եկեղեցւոյ կաթողիկոսը կարող են ստորագրել մատուցուած պաշտօնական թուղթը, եկեղեցապատկան կալուածաց գրաւման համար :

Կիլիկիոյ Ամեն. Տ. Սահակ կաթողիկոսն երկար պաշտօնադիր մը զրկած է, թէ՛ Ն. Ս. Օժութեան Հայոց Հայրապետին և թէ՛ Ս. Պատրիարք Հօր, որով Ռուսիոյ եկեղեցապատկան կալուածոց սեփականութեան վրայ պնդելու պարտականութիւնը կը շեշտէ, և իր համամարտիւնը կը յայտնէ Ս. Պատրիարք Հօր և Կ. Պօլսոյ Եպիսկոպոսաց ժողովին որոշումներուն :

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Սօֆիստի վէտօմոսթր» թօրթը գատի տրուած է իր Իշխանի դէմ գրուած մէկ յօդուածին համար :

Նոյն թերթը իր վերջին թիւով կը հաղորդէ հետեւեալը. «սոյոգ աղբւրներէ կիմանանք որ Պէլէշէրնա. բօշտա» թերթին խմբագրապետ Պ. Դանկով 120 հոգի ապստամբներու գլուխ անցնելով Մակեդոնիա անցեր է :

«Պետական լրագիր»ը կը հաղորդէ որ երեսփոխանական ժողովը լուծուած է :

Նախարարական ժողովը որոշել է ամէն կերպ խուսափել թուրքիոյ հետ ընդհարում ունենալէ. պատրաստ ըլլալ միայն ինքնապաշտպանութեան համար : Ռուսմանիա յայտարարած է որ ինք կրնայ համաձայնիլ Պուլկարիոյ հետ, եթէ միայն վերջինս խոստանայ հողային վարձատրութիւն տալ Ռուսմանիոյ :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա
Գերմանական թերթի մը Պօլսէն կը հեռագրեն որ քաղաքին մէջ

լուր տարածուած է թէ, ապստամբները քաղաքին շուրջ թունաւորած են ջրանցքներուն մէջ թոյն նետելով : Իշխանութիւնները լուրջ միջոցներ ձեռք առած են բնակչութիւնը ապահովելու համար :

Նոյնպէս Գերմանական ուրիշ թերթի մը թղթակիցը կը հաղորդէ որ ինք խօսակցութիւն ունեցած է յեղափոխական պետերէն միոյն հետ, որ յայտարարած է թէ, յեղափոխականները մեծ քանակութեամբ տիրամիտ ունին, 20 սրուակ Չումալի պագիլներ* և շատ մը դրամ : Եւ եթէ Եւրոպան չմիջամտէ, այդ ըստը պաշարը պիտի գործողութիւն Մակեդոնիոյ քաղաքները կործանելու և բնակչիւնները թունաւորելու համար :

«Մ. ցէյտ» Գեր. թերթին Պօլսէն կը հեռագրեն թէ, կառավարութիւնը իմացած է որ ապստամբները որոշած են Մարիցայի վրայ գտնուող մեծ կամուրջը՝ կուլէլի Պուրկապի քով՝ օդը հանել տինամիտով : Կամուրջը այժմ կը հսկեն 380 զինուորներ :

Քանի մը օրէ ի վեր Եւրոպի և Սուլթանի անձին պաշտպանութիւնը յանձնուած է երկու զօրավարի, չորս գնդապետի, ու թը հազարապետի և հարիւր զինուորի : Ամէն մէկ զօրավարը ամէն գիշեր Սուլթանէն 25 ոսկի կատանայ և կանխիկ :

«Լոյտ» ընկերութեան պատկանող շոգեկանները առայժմ Պուլկարիոյ ակերը չպիտի այցելեն : միեւն որ վաղգոփու նախն պայթումին պատճառները սաւազուին :

Սուլթանը հրամայել է որ ժողովուրդը իր մէջ հանգստանալու թիւն բանայ Մակեդոնիա գտնուող զօրքերուն համար ըզգեստեղէններ գնելու համար :

Սուլթանը իր գահակալութեան տարեգաւաճին առթիւ, քրիստոնիայ բարձր հոգեւորականութիւնը ընդունած միջոցին յայտարարած է որ ապստամբական շարժումները, որոնք իր հաւատարիմ հպատակներուն գործը չէ այլ օտարներու, շտապով պիտի ճնշուին :

Սուլթանը Աստուծու անունով երգուել է, որ ինքը իր բոլոր ճիգերը կը թափէ իր հպատակներուն բարօրութեանը համար : Յոյն պատրիարքին ցաւ յայտնելով որ յոյներն ալ վերջին շարժումներու միջոցին քիստոնիկ են, պատրաստակամութիւն յայտնել է պատրիարքին թող տալ հանգանակութիւն բանալ քիստուածներուն համար : Նոյնպէս ցաւ յայտնել է որ զինուորները, հակառակ իր հրամանին վատ վարմունքի մէջ գտնուել են քրիստոնեաներու հանդէպ, և դառ-

նալով Օրմանեանի՝ ըսեր է որ իր խօսքերը և հայոց կը վերաբերին :

«Կոզ» Քրանկակը հաղորդէ որ Բ. գուռը շրջաբերականով մը դեպքաններուն յայտարարել է, թէ կառավարութիւնը այլևս անկաքող է երաշխաւորել իրենց սպահովութիւնը :

«Պետ» թղթակիցը հեռագրով կիմացնէ որ իրապէս Ատրիանուպօլիսը հրդեհուած է ապստամբներու կողմէն և քանի մը գիւղերու մէջ ալ ընդհարումներ տեղի ունեցեր են թուրք զինուորներու հետ : Դատ մը գիւղեր քիստուած և տեղակներու վերածուած են :

ՌՈՒՍԻԱ
«Մայմ» թերթը կը տեղեկանայ որ Ներքին գործոց նախարարը. Բըլէվէն, բոլոր նահանգապետներուն և ալ իշխանութիւններուն օտազօղով մը հրամայած է դադարեցնել այլևս սինօնիզմի ակտուսեան սինիացները, իրենց նախկին ծրարէն — զաղթել Պաղեստին և հոն հաստատել իրենց ինքնուրոյն կառավարութիւնը — հեռանալով, կը ջանան եղիբ զօրացնել Ռուսաստանի մէջ իրենց ազգային զարգացումը, որը և հակառակ է եղալ ուս կառավարութեան ներքին քաղաքականութեան : Յառաջիկային կարգիլուի սինիստ քրօպականդիսաներուն ազատ շրջիլ և հրպարակային ժողովներ գումարել Ռուսաստանի մէջ, սինիստ առաջնորդները կը պարտաւորուին եղիբ ստորագրել պարտաւորութիւն մը, ըստ որում Ռուսաստանի իրենց հիմնական դրամագլուխը պիտի յանձնուի Օտէսայի ընկերակալութեան, որի նպատակն է օգնել հրէաներու Սիրիա և Պաղէստին գաղթելու գործին : Նոյնպէս պիտի գրաւուին բոլոր սինիստական արժէթղթերը :

ԻՏԱԼԻԱ
Հողմէն «Նայէ Յրաէ» Բրէսոն կը հաղորդեն, որ Իտալիոյ սոցիալ-տեմոկրատներու պիւնոն որոշած է ցարին Հողմէն այցելած ժամանակը հինգ օր ընդհանուր գործադուլ ընել ամբողջ Իտալիոյ մէջ, իրիւ բարոյական բողոք և արձամարանք ուստի ըստ նախկալութեան և միապետութեան դէմ : Բոլոր գործարանները, շոգեկանները, աշխատանոցները, վերջապէս Իտալիոյ ամբողջ անտեսական կեանքը Յարի Իտալիա գտնուած միջոցին պետք է կանգ առնէ :

Ա Չ Դ

Աղգ. երկսեռ վարժարանաց վերաբացումը տեղի պիտի ունենայ յառաջիկայ սեպտեմբեր 1 երկուշաբթի օր :

Ուստի կը հրաւիրուին ծնողք և պաշտպանք գիմնի ի Խորհրդարան ամէն օր ժամը 9.5 իրենց զուակայց մտից Արտօնագիրը ստանալու :

Հոգաբարձութիւն Աղգ. Երկսեռ վարժարանաց (Կնիք) 27 Օգոստոս 1903 Հաւան

Отговорникъ Мурадъ-Ераносянъ Печатница „Взаимность“ Варна

